| 2 | ԱՁ Սիմոնյան Սիրուն | Ք. Հրազդան, Մ. Սպարապետի 7 | Ք. Հրազդան, Մ. Սպարապետի 7 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 3 | ԱՁ Բարեղամյան Նունե | գյուղ Լեռնանիստ 11/34 | Ք. Հրազդան, Զ. Շահումյան 2-րդ նրբ. Թիվ 16 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 4 | ԱՁ Տիգրանյան Լևոն | Ք. Հրազդան, Շինարարների փ 25 | Ք. Հրազդան, Սպանդարյան, աղբյուրակ հանրախանութ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 5 | ԱՁ Միքայելյան Համեստ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 207/21 | Ք. Հրազդան, Երևանյան խճուղի 17 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 6 | ԱՁ Սայադյան Մանուկ | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 18/15 | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. Օգոստոսի 23 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 7 | ԱՁ Մկրտչյան Սասուն | Ք. Հրազդան, Վանատուր թաղ.429 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ., Զ. Անդրանիկի պ.93 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում, հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 8 | ԱՁ Մկրտչյան Սասուն | Ք. Հրազդան, Վանատուր թաղ.429 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ., Զ. Անդրանիկի պ.93 | արտաքին գովազդ | մեկ քառ/մ | 2022 թվականի հունվար ամիս |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*01 փետրվարի 2022թվականի N 60*

### *ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կառավարության 2006 թվականի նոյեմբերիի 16-ի N1708-Ն որոշումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հրազդան համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման ջրջանակներում նախատեսված հայտերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:*

*2. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հրազդան համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման ջրջանակներում նախատեսված հայտերի վերաբերյալ կազմակերպվող քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:*

*3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:*

*4.Հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հրազդան համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման ջրջանակներում նախատեսված հայտերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերի տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:*

*5. Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանի վրա:*

*6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը:*

*7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*01 փետրվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2021 թվականի փետրվարի 01-ի
N 60 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2022 թվականի փետրվարի 3-ից մինչև փետրվարի 17-ը ներառյալ կազմակերպվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հրազդան համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման շրջանակներում նախատեսված հայտերի վերաբերյալ հանրային քննարկումներ:
Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի 2022 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2022 թվականի փետրվարի 17-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:
Հանրային քննարկումների ընթացքում 2022 թվականի փետրվարի 18-ին ժամը 11:30-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:
Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060704010 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*01 փետրվարի 2022թվականի N 61*

## *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հուլիսի 31-ի N 334-Ա որոշումը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Ստեղծել քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝ համաձայն N 1,2 հավելվածների:*
*2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 12-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին» N 888 որոշումը:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*01 փետրվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

*Հավելվածներ*
*Հրազդան համայնքի ղեկավարի*
*2022 թվականի փետրվար 01-ի*
*N 61 որոշման*

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*02 փետրվարի 2022թվականի N 62*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշման 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ հոդվածի 1-ին մասով.*

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները՝ համաձայն հավելվածի:*
*2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 985 որոշումը:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*02 փետրվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի

2022թ. փետրվարի 2-ի N 62 որոշման

# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱԶԴԱՆ – 2022Թ.

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդանի համայնքային կապի և ազդարարման ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի **2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ:**

2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» № 384-Ն, 2017 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №346-Ն որոշումներով, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3.Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

## II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Ծառայության խնդիրներն են՝

1)Ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

2)քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ.

3)ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին, կապի ապահովման, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4)արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման նպատակով անխափան կապի ապահովման կազմակերպումը.

5)կապի համակարգի գործունեության կայունությանն ուղղված միջոցառումների պլանավորման և իրականացման կազմակեպումը.

6)ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում կապի և ազդարարման համակարգերի (սխեմաների) բնականոն գործունեության ապահովումը:

5.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Ծառայության անձնակազմի պատրաստում.

2)ենթակա ստորաբաժանումների ուժերի նախապատրաստում՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովման համար.

3)ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.

4) կապի համակարգերում վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում.

## III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6.Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ենթակա ստորաբաժանումների հիման վրա Ծառայության պետի առաջարկությամբ ստեղծվում են Ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

7.Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքի ղեկավարը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը՝ Ծառայության պետը:

8.Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է Ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:

9.Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու (ներ):

## IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Ծառայության պետի իրավունքները.

1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք Ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.

2)իրականացնում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.

3)Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.

4) վերահսկում է Ծառայության կազմավորումների գործունեությունը:

11. Ծառայության պետի պարտականությունները.

1)կազմակերպում է կապի ապահովումը համայնքային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.

2) ղեկավարում է Ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է Ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.

3) կազմակերպում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.

4) կազակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.

5)Ճշգրտում և գործողության մեջ է դնում Ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.

6)պատրաստի վիճակի է բերում Ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.

7)կատարված աշխատանքների մասին զեկուցում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին.

8)համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին ներկայացնում է առաջարկություններ՝ ծառայության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, անձնակազմի քանակի և հագեցման վերաբերյալ.

9)Ծառայության պետը պատասխանատվություն է կրում Ծառայության անձնակազմի պատրաստականության համար:

12.Ծառայության շտաբի պետի իրավունքները.

1) կազմակերպում է Ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.

2)վերահսկում է Ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.

3)ենթակա կազմավորումներին ու ստորաբաժանումներին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է Ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.

4)ելնելով իրավիճակից ճշգրտում է Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.

5)Ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է Ծառայության պետին:

13.Ծառայության շտաբի պետի պարտականությունները.

1)Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է Ծառայության ընթացիկ ղեկավարումը.

2)պլանավորում է Ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.

3)ապահովում է Ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.

4)պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հեռանկարային աշխատանքները.

5)ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է Ծառայության պետի տեղեկատվությունը համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին.

6)ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.

7)փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

14.Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն: Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

15.Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդան համայնքային ինժեներական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի, **2019 թվականի դեկտեմբերի 09-ի N 1405 որոշմամբ:**

2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3.Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

4.Ծառայության պետն ի պաշտոնե համարվում է **համայնքապետարանի ՏԶՀԿ և գյուղատնտեսության բաժնի պետը:**

## II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Ծառայության խնդիրներն են.

1)Անհրաժեշտության դեպքում ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

2)քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ.

3)ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին, ինժեներական, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4)պաշտպանական կառույցների շինարարության պլանավորումը, կազմակերպումը և պատսպարվող բնակչության ընդունման համար այդ կառույցները պատրաստ վիճակում պահելը.

5)պաշտպանական կառույցների և բնակչության պատսպարման համար նախատեսված այլ տարածքների նախապատրաստման, վերանորոգման աշխատանքների պլանավորումը և դրանց շահագործման նպատակով հսկողության սահմանումը.

6) պաշտպանական կառույցների հաշվառում և այդ կառուցներին բնակչության ամրագրում

7) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովում:

5.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Ծառայության անձնակազմի պատրաստում.

2) ոլորտում գործող կազմակերպությունների և ուժերի նախապատրաստում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում միջոցառումների իրականացման ապահովման համար.

3)ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.

4)բնակչության պատսպարման համար ռելիեֆային անվտանգ տարածքների ընտրություն և նախապատրաստում, պաշտպանական կառույցների վերանորոգման աշխատանքների պլանավորում և դրանց շահագործման նկատմամբ հսկողության սահմանում.

5)բնագավառի գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա անվտանգության, նորմատիվ փաստաթղթերի պահանջների իրականացման ապահովում:

## III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6.Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ոլորտում գործող կազմակերպությունների բազաների հիման վրա Ծառայության պետի առաջարկությամբ կարող են ստեղծվել Ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

7.ՈՒժերի տեսակները՝ կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է Ծառայության պետը:

8.Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքի ղեկավարը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը՝ Ծառայության պետը:

9.Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է Ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:

10.Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու (ներ):

## IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ծառայության պետի իրավունքները.

1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք Ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.

2) իրականացնում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.

3)Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.

4) վերահսկում է Ծառայության կազմավորումների գործունեությունը:

12. Ծառայության պետի պարտականությունները.

1) ապահովում է կապը համայնքային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.

2) ղեկավարում է Ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է Ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.

3) կազմակերպում և իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.

4) պատրաստ վիճակի է բերում գոյություն ունեցող պաշտպանական կառույցները.

5) կազակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.

6) ճշգրտում և գործողության մեջ է դնում Ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.

7) պատրաստի վիճակի է բերում Ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.

8) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին.

9)Ծառայության պետը պատասխանատվություն է կրում Ծառայության անձնակազմի պատրաստականության համար:

13. Ծառայության շտաբի պետի իրավունքները.

1) կազմակերպում է Ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.

2)վերահսկում է Ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.

3)Ծառայության անձնակազմին ու ոլորտի կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է Ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.

4) ելնելով իրավիճակից ճշգրտում է Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.

5)Ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է Ծառայության պետին:

14. Ծառայության շտաբի պետի պարտականությունները.

1)Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է Ծառայության ընթացիկ ղեկավարումը.

2)պլանավորում է Ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.

3)ապահովում է Ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.

4)պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հետանկարային աշխատանքները.

5)ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է

իրադրությունը և պատրաստում է Ծառայության պետի տեղեկատվությունը՝ համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին.

6)իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում ռազմավարական նշանակության և բնակչության կենսապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.

7)ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.

8)փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

15.Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն:Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

16.Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդան համայնքային բժշկական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի **2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ:***

*2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:*

*3.Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:*

*4.Ծառայության պետն ի պաշտոնե համարվում է **„Հրազդանի բժշկական կենտրոն„ ՓԲԸ-ի բուժգծով փոխտնօրենը:***

### II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

*4. Ծառայության խնդիրներն են.*

*1)Անհրաժեշտության դեպքում ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.*

*2)քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ.*

*3)ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին, փրկարարական անհետաձգելի աշխատանքների կազմակերպման ընթացքում բժշկական օգնության և սպասարկման ապահովման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.*

*4)հակառակորդի հարձակման վտանգի և հարձակման ժամանակ բնակչության բժշկական ապահովումն ու տուժած բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալը:*

*5.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.*

1)Ծառայության անձնակազմի և ենթակա կազմակերպությունների ղեկավար մարմինների պատրաստում.
2)ենթակա կազմակերպությունների և ուժերի նախապատրաստում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում միջոցառումների իրականացման ապահովման համար.
3)ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.
4)ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում բնակչության մասնագիտացված բժշկական օգնության կազմակերպում և իրականացում.
5)ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում բնակչության առողջության և շրջակա միջավայրի վնասակար գործոնների նկատմամբ սանիտարահիգիենիկ ու հակահամաճարակային միջոցառումների մշակում և իրականացում, թունավորումների և զանգվածային վարակիչ հիվանդությունների կանխարգելում.
6)ռադիոակտիվ նյութերով, քիմիական և մանրէաբանական (կենսաբանական) միջոցներով սննդի, խմելու ջրի և այլ արտաքին օբյեկտների լաբորատոր հսկողության իրականացման միջոցառումների մշակում.
7)բնագավառի գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա անվտանգության, նորմատիվ փաստաթղթերի պահանջների իրականացման ապահովում:

## III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6.Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ոլորտում գործող կազմակերպությունների բազաների հիման վրա Ծառայության պետի առաջարկությամբ կարող են ստեղծվել Ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:
7.Ուժերի տեսակները՝ կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է Ծառայության պետը:
8.Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքի ղեկավարը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը՝ Ծառայության պետը:
9.Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է Ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:
10.Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու (ներ):

## IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ծառայության պետի իրավունքները.
1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք Ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.

2) իրականացնում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.
3)Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.
4) վերահսկում է Ծառայության կազմավորումների գործունեությունը:
12. Ծառայության պետի պարտականությունները.
1) ապահովում է կապը մարզային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.
2)ղեկավարում է Ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է Ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.
3)կազմակերպում և իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.
4) կազակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.
5)ճշգրտում և գործողության մեջ է դնում Ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.
6)պատրաստի վիճակի է բերում Ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.
7)կատարված աշխատանքների մասին զեկուցում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետինհամայնքի ղեկավարին.
8)Ծառայության պետը պատասխանատվություն է կրում Ծառայության անձնակազմի պատրաստականության համար:
13.Ծառայության շտաբի պետի իրավունքները.
1)կազմակերպում է Ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.
2)վերահսկում է Ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.
3)Ծառայության անձնակազմին ու ոլորտի կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է Ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.
4)ելնելով իրավիճակից ճշգրտում է Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.
5)Ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է Ծառայության պետին:
14.Ծառայության շտաբի պետի պարտականությունները.
1)Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է Ծառայության ընթացիկ ղեկավարումը.
2)պլանավորում է Ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.
3)ապահովում է Ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.
4)պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հեռանկարային աշխատանքները.
5)ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է Ծառայության պետի տեղեկատվությունը՝ համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին.

6)իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում ռազմավարական նշանակության և բնակչության կենսաապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.
7)ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.
8)բժշկական ապահովման աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

15.Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն: Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:
16.Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդանի համայնքային տրանսպորտային ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի, **2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ:**

2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3.Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

4. Ծառայության պետն ի պաշտոնե համարվում է **համայնքապետարանի ՏԱՄԿ բաժնի պետը:**

## II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Ծառայության խնդիրներն են.

1)Անհրաժեշտության դեպքում ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

2)քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ.

3)ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4)բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ իրականացնելու դեպքում տրանսպորտային միջոցներով ապահովումը:

5.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Ծառայության անձնակազմի պատրաստում.

2)ոլորտում գործող կազմակերպությունների և ուժերի նախապատրաստում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում միջոցառումների իրականացման ապահովման համար.

*3)ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.*
*4)փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար տրանսպորտային տեխնիկայի ապահովում.*
*5)բնագավառի գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա անվտանգության, նորմատիվ փաստաթղթերի պահանջների իրականացման ապահովում:*

## *III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ*

*6.Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ոլորտում գործող կազմակերպությունների բազաների հիման վրա Ծառայության պետի առաջարկությամբ կարող են ստեղծվել Ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:*
*7. ՈՒժերի տեսակները՝ կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է Ծառայության պետը:*
*8.Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքի ղեկավարը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը՝ Ծառայության պետը:*
*9.Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է Ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:*
*10.Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու (ներ):*

## *IV.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

*11. Ծառայության պետի իրավունքները.*
*1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք Ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.*
*2)իրականացնում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.*
*3)Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.*
*4) վերահսկում է Ծառայության կազմավորումների գործունեությունը:*
*12. Ծառայության պետի պարտականությունները.*
*1)ապահովում է կապը համայնքային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.*
*2) ղեկավարում է Ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է Ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.*

3)կազմակերպում և իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.
4) կազակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.
5)Ճշգրտում և գործողության մեջ է դնում Ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.
6)պատրաստի վիճակի է բերում Ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.
7)կատարված աշխատանքների մասին զեկուցում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետինհամայնքի ղեկավարին.
8)Ծառայության պետը պատասխանատվություն է կրում Ծառայության անձնակազմի պատրաստականության համար:
13.Ծառայության շտաբի պետի իրավունքները.
1)կազմակերպում է Ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.
2)վերահսկում է Ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.
3)Ծառայության անձնակազմին ու ոլորտի կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է Ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.
4)ելնելով իրավիճակից ճշգրտում է Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.
5)Ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է Ծառայության պետին:
14.Ծառայության շտաբի պետի պարտականությունները.
1)Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է Ծառայության ընթացիկ ղեկավարումը.
2)պլանավորում է Ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.
3)ապահովում է Ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.
4)պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հեռանկարային աշխատանքները.
5)ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է Ծառայության պետի տեղեկատվությունը համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին.

6) իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում ռազմավարական նշանակության և բնակչության կենսաապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.
7)ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.
8)փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

15.Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն: Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

16.Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Քաղաքացիական պաշտպանության համայնքային նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունը (այսուհետև ծառայություն) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի 2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ։*

*Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշմամբ, վերադաս համապատասխան ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով։*

*Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը։*

*Ծառայության պետերն ի պաշտոնե համարվում են **համայնքապետարանի ԿՄՍ բաժնի պետը և ֆինանսական բաժնի առաջատար մասնագետը։***

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

*Ծառայության խնդիրներն են.*

*քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ ծառայությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.*

*քաղաքացիական պաշտպանության ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.*

*ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության պետին՝ մարզպետին, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.*

*տուժած բնակչության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմի՝ սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և միջոցներով ապահովումը, նյութական արժեքների պաշարների պահպանումը.*

*Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.*

*ծառայության և կազմակերպությունների ղեկավար մարմինների պատրաստումը.*

*իրավիճակի մասին տեղեկության հավաքումը, վերլուծումը, գնահատումը և քաղաքացիական պաշտպանության պետին՝ մարզպետին փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմին սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և*

միջոցներով ապահովման համար առաջարկությունների ներկայացումը.
ենթակա կազմակերպությունների ուժերի նախապատրաստումը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովման համար.
ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի գնահատումը, դրա հիման վրա ծառայության ՔՊ պլանի ճշգրտումը.
ռազմական գործողությունների հետևանքների հետախուզումը, իրադրության գնահատումը, վերլուծումը, առաջարկությունների և որոշումների ընդունումը.
ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում ՀՀ Պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ ազգաբնակչությանը պարենային և այլ ապրանքներով ապահովումն ու սննդի կազմակերպումը.
տարահանված բնակչությանը պարենային և այլ ապրանքներ մատակարարելու համար առևտրի ցանցի կազմակերպումը և նախապատրաստումը.
ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում մարզի տարածքի ռազմավարական նշանակության կազմակերպությունների անխափան գործունեության ապահովումը.
զորահավաքային նախապատրաստության հզորությունների ստեղծման նյութատեխնիկական մատակարարման ֆինանսավորման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ծառայության քաղաքացիական պաշտպանության պետը իսկ անմիջական /ընթացիկ/ ղեկավարումը քաղաքացիական պաշտպանության պետի կողմից նշանակված ծառայության ՔՊ շտաբի պետը:
Ուժերի տեսակները կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է ՔՊ ծառայության պետը:
Ծառայության պետի որոշմամբ, տվյալ բնագավառի ղեկավարի կողմից և աշխատողներից ստեղծվում է ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:
Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակում է պատասխանատու/պատասխանատուներ/:
Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան ստորաբաժանումների և կազմակերպությունների հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարզային ծառայության պետի
իրավունքները.
իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք քաղաքացիական պաշտպանության ծառայության
ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.
իրականացնում է հսկողություն համայնքային կազմակերպությունների նկատմամբ համապատասխան կազմավորումների ստեղծման, նրանց համալրման, հագեցման և պատրաստության գործընթացի նկատմամբ.

իրականացնում է կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.
ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն ՔՊ պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ, ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.
վերահսկում է քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայության կազմավորումների գործունեությունը:
Պարտականությունները.
ապահովում է քաղաքացիական պաշտպանության համայնքային կազմավորումների ստեղծումը.
ապահովում է կապը մարզային կառավարման կետի, վերադաս ծառայության և համայնքային կազմավորումների հետ.
իրականացնում է ծառայության զորահավաքային նախապատրաստության ծրագիրը և պլանները.
ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.
կազմակերպում և իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.
կազակերպում է ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումն և հավաքը.
ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.
պատրաստի վիճակի է բերում քաղաքացիական պաշտպանության ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.
կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետին՝ մարզպետին.
մարզի ՔՊ պետին ներկայացնում է առաջարկություններ ծառայության ՔՊ կազմավորումների ստեղծման, անձնակազմի քանակի և հագեցման վերաբերյալ:
ՔՊ մարզային ծառայության պետը, պատասխանատվություն է կրում ծառայության և ծառայության կազմավորումների պատրաստականության համար.
Ծառայության շտաբի պետի՝
իրավունքները.
կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.
վերահսկում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.
ենթակա կազմավորումներին ու կազմակերպություններին է Փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.
ելնելով իրավիճակից ճշգրտում է քաղաքացիական պաշտպանության ծառայության ՔՊ պլանը.
ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում ԷՔՊ պետին:
Պարտականությունները.
կազմակերպում և ապահովում է ծառայության և կազմավորումների անընդհատ ղեկավարումը.
ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է ծառայության ղեկավարումը.

պլանավորում է ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.
ապահովում է ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.
պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հեռանկարային աշխատանքները.
կազմակերպում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է ծառայության պետի տեղեկատվությունը քաղաքացիական պաշտպանության պետին.
իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում ռազմական նշանակության և բնակչության կենսաապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.
կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.
խմբավորում, տեխնիկական հագեցվածությամբ ապահովում, մշտական պատրաստ վիճակում է պահում ծառայության կազմավորումները.
փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն ծառայության պետի և մասնագիտացված կազմավորումների հրամանատարներիՔՊ հիմնահարցերով ընդհանուր և մասնագիտացված ուսուցումը իրականացվում է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ակադեմիայում
ծառայության պետ՝ երեք տարին մեկ անգամ.
կազմավորումների հրամանատարներ՝ երկու տարին մեկ անգամ:
Ծառայության պետի, շտաբի անձնակազմի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման և հատուկ տակտիկական վարժանքների միջոցով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդանի համայնքային բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի **2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ:**

2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3. Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

4.Ծառայության պետն ի պաշտոնե համարվում է **համայնքապետարանի ՏԶՀԿ և գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալը:**

### II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Ծառայության խնդիրներն են.

1) Անհրաժեշտության դեպքում ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ.

3) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին, պաշտպանական, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4) գյուղատնտեսական կենդանիների և բույսերի, անասնաբուծական ու բուսաբուծական արտադրանքի, գյուղատնտեսական նպատակների համար օգտագործվող ջրային աղբյուրների և ոռոգման նպատակով օգտագործվող ջրամատակարարման ցանցերի պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը.

5)վտանգավոր տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման աշխատանքների կազմակերպումը:

5.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Ծառայության անձնակազմի պատրաստում.

2) ոլորտում գործող կազմակերպությունների և ուժերի նախապատրաստում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում միջոցառումների իրականացման ապահովման համար.

3)ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.

4)գյուղատնտեսական մշակաբույսերի կարանտին հիվանդությունների և առավել վնասակար օրգանիզմների դեմ պայքարի, անասնահակահամաճարակային միջոցառումների կարանտինային սահմանափակումների կազմակերպում և իրականացում.

5)վնասված տարածքներում քիմիական և կենսաբանական վարակվածության լաբորատոր հսկողության և հետևանքների վերացման միջոցառումների իրականացում.

6)անասնաբուժական և ֆիտոպատոլոգիական հետախուզության, անասնաբուժական մշակման, վնասված կենդանիների բուժման, ցանքատարածությունների, արոտավայրերի և անասնաբուժական ու բուսաբուծական արտադրանքների ախտահանման միջոցառումների իրականացում.

7)ճառագայթային աղտոտումների, քիմիական և մանրէաբանական վարակված տարածքներում ցանքատարածքների ֆոնդի վերականգնման միջոցառումների պլանավորումը և իրականացումը.

8)սննդամթերքի անվտանգության, ինչպես նաև դրա հետ առնչվող սարքավորումների տեխնոլոգիական, անասնաբուժական նորմերի ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացում.

9)բնագավառի գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա անվտանգության, նորմատիվ փաստաթղթերի պահանջների իրականացման ապահովում:

## III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6.Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ոլորտում գործող կազմակերպությունների բազաների հիման վրա Ծառայության պետի առաջարկությամբ կարող են ստեղծվել Ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

7.ՈՒժերի տեսակները՝ կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է Ծառայության պետը:

8.Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքի ղեկավարը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը՝ Ծառայության պետը:

9.Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է Ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:

10.Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու (ներ):

## IV.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*11. Ծառայության պետի իրավունքները.*

*1)իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք Ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.*

*2)իրականացնում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.*

*3)Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.*

*4) վերահսկում է ծառայության կազմավորումների գործունեությունը:*

*12. Ծառայության պետի պարտականությունները.*

*1) ապահովում է կապը համայնքային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.*

*2)ղեկավարում է Ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է Ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.*

*3)կազմակերպում և իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.*

*4) կազակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.*

*5) ճշգրտում և գործողության մեջ է դնում Ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.*

*6) պատրաստի վիճակի է բերում Ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.*

*7) կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին.*

*8)Ծառայության պետը պատասխանատվություն է կրում Ծառայության անձնակազմի պատրաստականության համար:*

*13. Ծառայության շտաբի պետի իրավունքները.*

*1)կազմակերպում է Ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.*

*2)վերահսկում է Ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.*

*3)Ծառայության անձնակազմին ու ոլորտի կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է Ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.*

*4) ելնելով իրավիճակից ճշգրտում է Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.*

*5)Ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է Ծառայության պետին:*

*14. Ծառայության շտաբի պետի պարտականությունները.*

1) Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է Ծառայության ընթացիկ ղեկավարումը.
2)պլանավորում է Ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.
3) ապահովում է Ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.
4)պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հետախուզական աշխատանքները.
5)ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է Ծառայության պետի տեղեկատվությունը համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին.
6)իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում ռազմավարական նշանակության և բնակչության կենսաապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.
7)ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.
8)փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

15.Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն: Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:
16.Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդանի համայնքային հասարակական կարգի պահպանման ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի **2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ:**

2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3.Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

4.Ծառայության պետն ի պաշտոնե համարվում է **22 ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի պետը:**

### II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

**4. Ծառայության խնդիրներն են.**

1)Անհրաժեշտության դեպքում ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

2)քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ.

3)ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին համայնքի ղեկավարին, հասարակական կարգի պահպանման, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4)ռազմական դրության ժամանակ քաղաքներում և այլ բնակավայրերում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայաններում ու տրանսպորտային մայրուղիներում հասարակական կարգի պահպանման ապահովումը, գույքի պահպանումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը

5) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը:

*5.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.*

*1) Ծառայության անձնակազմի պատրաստում.*

*2)ենթակա ստորաբաժանումների ուժերի նախապատրաստում՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովման համար.*

*3)ռազմավարական նշանակության և կենսաապահովման կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացում.*

*4)բնագավառի գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա անվտանգության, նորմատիվ փաստաթղթերի պահանջների իրականացման ապահովում.*

*5)ռազմական գործողությունների պատճառով ստեղծված իրավիճակի հետախուզում, գնահատում, վերլուծում և դրանց հիման վրա Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում.*

*6)Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա առանձին մասերում ռազմական դրության միջոցառումների անցկացման մասնակցության ապահովում.*

*7) խոցված տարածքների և բնակավայրերի շրջափակման կազմակերպում.*

*8) անձնագրային ռեժիմի հսկողության իրականացում.*

*9)ազգաբնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման կազմակերպում, դիակների հողարկավորման աշխատանքներում քաղաքացիական պաշտպանության Գյումրու համայնքային բնակչության հատուկ սպասարկումների ծառայությանը աջակցում.*

*10)համայնքի տարածքում ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմի և համաճարակների ժամանակ կարանտին միջոցառումների անցկացման մասնակցության ապահովում:*

## *III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ*

*6.Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար ենթակա ստորաբաժանումների հիման վրա Ծառայության պետի առաջարկությամբ կարող են ստեղծվել Ծառայության գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:*

*7. ՈՒժերի տեսակները՝ կազմավորումները (ջոկատները, խմբերը, օղակները) և օգտագործվող միջոցների քանակն ու տեսակը, ելնելով խնդիրների ծավալից, որոշում է Ծառայության պետը:*

*8. Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքի ղեկավարը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը Ծառայության պետը:*

*9.Ծառայության պետի որոշմամբ, ղեկավար կազմից և աշխատակիցներից ստեղծվում է Ծառայության շտաբ, որը պլանավորում ու ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները:*

*10.Ամենօրյա ընթացիկ աշխատանքների պլանավորման և իրականացման համար աշխատողներից նշանակվում է պատասխանատու (ներ):*

## IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ծառայության պետի իրավունքները.

1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք Ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման.

2) իրականացնում է համայնքներում և կազմակերպություններում ստեղծված համապատասխան կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ.

3)Ծառայության ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում.

4) վերահսկում է Ծառայության կազմավորումների գործունեությունը:

12. Ծառայության պետի պարտականությունները.

1) ապահովում է կապը համայնքային կառավարման կետի, քաղաքացիական պաշտպանության վերադաս, համայնքային և կազմակերպությունների համապատասխան ծառայությունների հետ.

2) ղեկավարում է Ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է Ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստությունը.

3)կազմակերպում և իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու դեպքում քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումները.

4) կազմակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումը և հավաքը.

5)Ճշգրտում և գործողության մեջ է դնում Ծառայության պլանը և ապահովում պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.

6)պատրաստի վիճակի է բերում Ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն.

7)կատարված աշխատանքների մասին զեկուցում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին՝ համայնքի ղեկավարին.

8)Ծառայության պետը պատասխանատվություն է կրում Ծառայության անձնակազմի պատրաստականության համար:

13.Ծառայության շտաբի պետի իրավունքները.

1)կազմակերպում է Ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ.

2)վերահսկում է Ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակում պահպանումը.

3)ենթակա կազմավորումներին ու ստորաբաժանումներին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և ապահովում է Ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը.

4) ելնելով իրավիճակից ճշգրտում է Ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.

5)Ծառայության պետի որոշումների պահանջների կատարման ընթացքում ենթականերին տալիս է հրահանգներ, առավել կարևոր հրահանգների մասին շտաբի պետը զեկուցում է Ծառայության պետին:

14.Ծառայության շտաբի պետի պարտականությունները.

1)Ծառայության պետի բացակայության դեպքում ստանձնում է Ծառայության ընթացիկ ղեկավարումը.

2)պլանավորում է Ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը.

3)ապահովում է Ծառայության կայուն ղեկավարումը և մշտական պատրաստ վիճակում է պահում կառավարման կետը.
4)պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացքում հեռանկարային աշխատանքները.
5)ապահովում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետախուզությունը, վերլուծում և ընդհանրացնում է ստացված տվյալները, գնահատում է իրադրությունը և պատրաստում է Ծառայության պետի տեղեկատվությունը համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին.
6) իրականացնում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման դեպքում ռազմավարական նշանակության և բնակչության կենսաապահովման օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները.
7)ապահովում է քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների միջև փոխհամագործակցությունը.
8)փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար օգտագործում է կապի բոլոր տեսակի միջոցները:

## V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

15.Ծառայության անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի №134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №46-Ն որոշման համաձայն: Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:
16.Ծառայության պետի, շտաբի և կազմավորումների անձնակազմերի տեսական գիտելիքների և գործնական ունակությունների կատարելագործումն իրականացվում է տարբեր մակարդակներում անցկացվող հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական վարժանքների և այլ ուսումնավարժություններում նրանց ընդգրկման միջոցով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*1.Քաղաքացիական պաշտպանության Հրազդան համայնքային կոմունալ-տեխնիկական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի՝ քաղաքացիական պաշտպանության պետի* ***2022 թվականի հունվարի 31-ի N 53 որոշմամբ:***

*2.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվկաի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշմամբ, վերադասի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:*

*3.Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Քաղաքացիական պաշտպանության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 10.04.2003թ. ՝Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին՝ թիվ 384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:*

*4.Ծառայության գործունեության նպատակը և առարկան է՝ իր իրավասության շրջանակներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:*

*5.Ծառայության պետն ի պաշտոնե համարվում է* ***համայնքապետարանի Բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետը:***

## 2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Ծառայության խնդիրներն են՝

ա/Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի ,,Լրիվ,, պատրաստականության բերման ժամանակ:
բ/Կոմունալ-տեխնիկական ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և ապահովումը մշտական պատրաստականության վիճակում:
գ/Ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության պետին(մարզպետին) վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:
դ/Ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ջրամատակարարման և կոյուղու ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը:
ե/Փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կոմունալ տեխնիկական ապահովումը:
2.Ծառայությունն իր խնդիրները կատարելու նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝
ա/Ծառայության և կազմակերպությունների ղեկավար մարմինների պատրաստում:
բ/Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար համապատասխան ուժերի և միջոցների ստեղծումը:
գ/Ենթակա կազմակերպությունների և ուժերի նախապատրաստում ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցների իրականացման ապահովման համար:
դ/Ռազմական գործողությունների հետևանքով տուժած բնակչությանը, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներին մասնակցող կոմունալ տեխնիկական կազմավորումներին նյութատեխնիկական միջոցներով ապահովում:
ե/Ռազմական գործողությունների հետևանքների գնահատում, դրա հիման վրա պլանների ճշգրտում:
զ/Ռազմական գործողությունների հետևանքների հետազոտում, իրադրության գնահատում, վերլուծում, առաջարկությունների և որոշումների ընդունում:

է/Ջրամատակարարման, կոյուղու ցանցի կայունության բարձրացման և անվտանգ շահագործման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը:
ը/Ռազմական դրության պայմաններում ջրային ռեսուրսների անվտանգության վերահսկման իրականացման ապահովումը:
թ/Հիդրոտեխնիկական կառույցների օգտագործման անվտանգության վերահսկման իրականացումը:
ժ/Ռազմական դրության պայմաններում ռազմավարական նշանակության և ազգաբնակչության կենսաապահովման օբյեկտները, վնասված բնակավայրերը խմելու ջրով ապահովելու միջոցառումների մշակումը և իրականացումը:
ժա/Ջրամատակարարման և կոյուղու ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1.Ծառայության վրա դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերը և միջոցները ստեղծվում են պետական կառավարման հանրապետական, տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների և մարզի տարածքը սպասարկող ջրմուղ-կոյուղու և գազի ձեռնարկությունների բազայի վրա:

2.Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ անմիջական (ընթացիկ) ղեկավարումը ծառայության պետը: Քաղաքացիական պաշտպանության բոլոր միջոցառումները պլանավորելու և ղեկավարելու համար ծառայության պետի հրամանով ստեղծվում է ծառայության շտաբ /տվյալ բնագավառի ղեկավար կազմից և աշխատակիցներից/:

Քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար համապատասխան ստորաբաժանումների և կազմակերպությունների հիման վրա ծառայությունը ստեղծում է իր գործառույթներին բնորոշ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մարզային ծառայության պետի

ա/ իրավունքները.

իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կարգադրություններ և հրահանգներ, որոնք քաղաքացիական պաշտպանության ծառայության ստորաբաժանումների կողմից ենթակա են պարտադիր կատարման, մարզի համայնքային և օբյեկտային ծառայությունների նկատմամբ իրականացնում է հսկողություն(համապատասխան կազմավորումների ստեղծման, նրանց համալրման, հագեցման և պատրաստության գործընթացի նկատմամբ),

իրականացնում է քաղաքացիական պաշտպանության մարզային, համայնքային և օբյեկտային կազմավորումների պատրաստության պլանային և արտապլանային ստուգումներ,

ծառայության ստորաբաժանումներին և կազմավորումներին տալիս է հանձնարարականներ և սահմանում հսկողություն քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստության բերման և աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ,

վերահսկում է քաղաքացիական պաշտպանության ծառայության ենթակա կազմավորումների և կազմակերպությունների գործունեությանը,

բ/ պարտականությունները.

-- ապահովում է քաղաքացիական պաշտպանության համայնքային և օբյեկտային կոմունալ-տեխնիկական ծառայություններին կազմավորումների ստեղծումը,

-- ապահովում է կապը մարզային կառավարման կետի, վերադաս /հանրապետական/ և համայնքային համապատասխան ծառայության և կազմավորումների հետ,

-- ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ծառայության գործունեությունը, ստեղծում և ապահովում է ծառայության ուժերի և միջոցների մշտական պատրաստականությունը,

-- կազմակերպում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության ծառայության լրիվ պատրաստականության բերման առաջնահերթ միջոցառումները,

-- կազմակերպում է ծառայության ղեկավար կազմի ազդարարումն ու հավաքը,

-- Ճշգրտում և գործողության մեջ է դնում ծառայության պլանները և ապահովում է դրանցով նախատեսված միջոցառումների իրականացումը,

-- պատրաստ վիճակի է բերում քաղաքացիական պաշտպանության ծառայության կառավարման կետը և կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն,

-- կատարված աշխատանքների մասին զեկուցում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետին,

-- հանրապետական կոմունալ-տեխնիկական ծառայության հետ կազմակերպում է համագործակցություն և փոխտեղեկատվություն:

Ծառայության շտաբի պետի

ա/ իրավունքները.

-- կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության շտաբի աշխատանքները, հսկողություն է իրականացնում ծառայության կազմավորումների կողմից պլանավորված միջոցառումների կատարման նկատմամբ,

-- վերահսկում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների և անհատական պաշտպանության միջոցների մշտական պատրաստ վիճակի պահպանումը,

-- ենթակա կազմավորումներին ու կազմակերպություններին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ծառայության անձնակազմի ազդարարումը և հավաքը,

-- ելնելով իրավիճակից ճշգրտում է ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը:

բ/ պարտականությունները.

-- կազմակերպում և ապահովում է ծառայության և կազմավորումների անմիջական ղեկավարումը,

-- պլանավորում է ծառայության անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստականությունը և վերահսկում է դրանց իրականացումը,

